ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ 80-90-ԱԿԱՆ ԹԹ.

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գ. Լ.

Նախախորհրդային շրջանի Արևելյան Հայաստանի մտավորականությանն առ այսօր ոչ մի ամբողջական ուսումնասիրություն նվիրված չէ: Իհարկե, որոշ հետազոտողներ այս կամ այն չափով անդրադարձել են նրա առանձին շերտերին, որքանով որ դա առնչվել է իրենց ուսումնասիրած թեմաներին: Դրանում իր «մեղքն» ունի նաև նյութերի ոչ բավարար քանակը: Թերևս միայն 1897 թ. Ռուսական կայսրությունում կատարված մարդահամարն է հնարավորություն տալիս քիչ թե շատ ամփոփ պատկերացում կազմելու արևելահայ մտավորականության թվաքանակի, մասնագիտական կազմի մասին:

Բնական է, որ Արևելյան Հայաստանում մտավորականությունը չէր կարող մեծաթիվ լինել նախ այն պարզ պատճառով, որ գաղութային ծայրամաս էր, և երկրորդ՝ բուրժուական հարաբերությունները դեռևս բավարար չափով զարգացած չէին:

Միաժամանակ Արևելյան Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունների բացակայությունը հարկադրում էր երիտասարդությանը ուսումը շարունակել կայսրության համապատասխան կենտրոններում և արտասահմանում: XIX դ. 80-ական թթ. կեսերին, «Արձագանքի» տվյալներով, մոտ 300 հայ ուսանող կար Ռուսաստանի բարձրա-գույն ուսումնական հաստատություններում և 200-ը՝ եվրոպական երկրներում[1]: «Ձևավորվում էր ժողովրդի «զարգացած մասը», ժողովրդի մտավոր զորությունը, նրա ինտելիգենցիան»[2]: Արևելյան Հայաստանում չգտնելով համապատասխան միջավայր՝ նրանց մեծ մասը կենտրոնանում էր Անդրկովկասի (Թիֆլիս, Բաքու) և կայսրության (Մոսկվա, Պետերբուրգ) քաղաքներում, որտեղ և հիմնականում ձևավորվում ու գործում էր արևելահայ մտավորականությունը: Դրան նպաստում էր նաև նշված վայրերում հայկական գաղթավայրերի առկայությունը:

Նշենք, որ, ի տարբերություն բուն ռուսական մտավորականության, որը ձևավորվում էր «գլխավորապես աստիճանավորների, կալվածատերերի, վաճառականների, տերտերների, այսինքն՝ այն դասակարգերի միջավայրից, որոնք կրթությունը դիտում էին որպես կարիերայի միջոց»[3], արևելահայ մտավորականությունն իր կազմով ավելի դեմոկրատ էր: Այդ երևույթը գնալով ավելի էր խորանում: Դա նկատվում էր նաև Ռուսաստանում, որտեղ ավելանում էր տարաստիճան (տարբեր դասային պատկանելություն ունեցող) մտավորականության տեսակարար կշիռը:

---

[1] Արձագանք, 1888, թիվ 11:
[2] **Ռաֆֆի**, Եր., հ. 9, Ե., 1964, էջ 473:
[3] **Плеханов Г. В.,** *Избранные философские произведения, т. I, М., 1956, с. 331.*

Սոցիալական կառուցվածքի մեթոդաբանական վերջնական, ոչ բավարար մշակված լինելը անդրադառնում է նաև տվյալ հասարակության մեջ մտավորականության տեղի և դերի վրա:

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում մտավորականությունը տեղ է գրավում բուրժուազիայի և պրոլետարիատի միջակայքում՝ միջին դասերում, մանր բուրժուազիայի հետ և, ի տարբերություն այդ «հին միջինի», անվանվում է «նոր միջին դաս»:

Ժամանակակից սոցիոլոգիական, փիլիսոփայական գրականությունում գոյություն ունեն «ինտելիգենցիայի» բազմաթիվ բնորոշումներ[4]: Ինչ վերաբերում է դրա ընդգրկման սահմաններին, ապա տարաձայնություններն ավելի բազմազան են: Հենվելով 1897 թ. մարդահամարի նյութերի վրա՝ ըստ Լ. Երմանի, Ռուսական կայսրությունում մտավորականության ընդհանուր թիվը կազմում է 870 հազար մարդ[5]: Սակայն այդ խըմբավորումը համոզիչ չէ: Ոչ մի տարբերություն չի դրվում մտավորականության և ծառայողների միջև: Մտավորականության շարքում են հաշվարկվել պետական և դատական օրգաններում վարձով աշխատողները, որոնք մարդահամարում նշված են որպես “служители, рассыльные , сторожа ”: Հետևաբար, մտավորականության թիվը, ինչպես իրավացիորեն կարծում է Վ. Լեյկինա-Սվիրսկայան, չի համապատասխանում իրականությանը ո՛չ պրոֆեսիոնալ, ո՛չ սոցիալական և ո՛չ էլ քանակական առումով[6]:

Նյութական արտադրության բնագավառում աշխատող մտավորականությունն ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում փոքրաթիվ էր: Ճիշտ է, XIX դ. վերջին տասնամյակներին, կապված արդյունաբերական վերելքի հետ, նրանց պահանջարկը մեծացավ, բայց Ռուսական կայսրության համապատասխան ուսումնական հաստատությունները հեռու էին այն բավարարելուց, իսկ Արևելյան Հայաստանում չկար ոչ մի տեխնիկական միջնակարգ կամ բարձրագույն ուսումնական հաստատություն: Հայկական տեխնիկական մտավորականության ձևավորման համար նշանակալից դեր խաղացին Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի և կայսրության այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունները: Վ. Կ. Ոսկանյանի հրատարակած արխիվային տվյալների հիման վրա[7], Ա. Կ. Գրիգորյանցի կատարած հաշվարկների համաձայն, մինչհեղափոխական Ռուսաստանի բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատություններում կրթու-

---

[4] *Социология в СССР, М., 1965, с. 394; Кугел С. А., Новое в изучении социальной структуры общества, Л., 1968, с. 23; Семенов В. С., Капитализм и классы, М., 1969, с. 98-115; Карапетян Р. О., Интеллигенция в социальной структуре общества, М., 1974.*

[5] **Ерман Л. К.,** *Интеллигенция в первой русской революции, М., 1966, с. 11-15.*

[6] *Лейкина-Свирская В. Р., Интеллигенция в России во второй половине XIX века, М., 1971, с. 15.*

[7] **Восканян В. К.,** *Материалы из украинских архивов (*ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1962, N 3.

թյուն է ստացել մոտ երեք հազար հայ[8]: Ավելի քան 200 հայ տեխնիկական բարձրագույն կրթություն է ստացել արտասահմանյան երկրներում[9]: Բնական է, որ այս տվյալներն ամբողջական չեն, և որ նրանց միայն մի փոքր մասն էր աշխատում Արևելյան Հայաստանում:

Մարդահամարի տվյալների համաձայն՝ 1897 թ. Արևելյան Հայաստանում կար 21 ինժեներ–տեխնոլոգ[10], որոնք հիմնականում զբաղված էին պղնձաարդյունաբերությունում և որոշ չափով՝ երկաթուղային տրանսպորտում: Տեխնիկական մտավորականության հավանաբար մեծ մասը հաշվարկված է աստիճանավորների խմբում, որը և հնարավորություն չի տալիս պարզելու նրանց ճիշտ թվաքանակը:

Փոքրաթիվ էր նաև առողջապահության բնագավառում զբաղվածների թիվը, թեև պահանջարկը մեծ էր, վարձատրությունն էլ՝ բարձր: XIX դ. 80-ական թթ. վերջին (1887 թ.) Երևանի նահանգում կար ընդամենը 11 քաղաքային բժիշկ[11], իսկ 90-ական թթ. սկզբին՝ 1891 թ., բոլոր մասնագիտությունների գծով ընդամենը՝ 85-ը, նախորդ տարվանից 11-ով ավե-լի[12], այսինքն՝ մոտ 8 հազարից ավելի բնակչին ընկնում էր մեկ բժիշկ: Մխիթարական չէր վիճակը նաև Ռուսական կայսրությունում: Բժշկական դեպարտամենտի տվյալներով՝ եվրոպական Ռուսաստանում 1890 թ. 100 հազար բնակչին բաժին էր հասնում ընդամենը 9 բժիշկ[13]:

1892 թ. բժիշկների թիվը մի փոքր ավելանում է՝ հասնելով 94-ի[14], իսկ 1895 թ.՝ նվազում՝ իջնելով 74-ի[15]: Շատ ավելի փոքրաքանակ էր պետական բժիշկների թիվը: 1893-1896 թթ. Երևանի նահանգի գավառներում գործել են ընդամենը 35 գյուղական հաստիքային բժիշկներ, որոնց պահպանման համար պահանջվում էր տարեկան 30 հազար ռուբլի[16]: Դարավերջին առողջապահության բնագավառում զբաղվածների թվաքանակը մեծանում է: 1897 թ. Երևանի նահանգում աշխատում էր 217, Կարսի մարզում՝ 145, Բորչալուի, Ախալքալաքի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում՝ 127 մարդ[17], ընդամենը Արևելյան Հայաստանում՝ 523, որից 87-ը՝ կին:

---

[8] **Григорянц А. К.,** *Формирование и развитие технической интеллигенции Армении, Е., 1966, с. 76-77.*

[9] Նույն տեղում, էջ 81:

[10] *Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т. III, СПб., 1905, с. 82, 94, 96, 119, 127.*

[11] *Российский государственный исторический архив в Санкт-Петербурге (РГИА СПб.), ф. 1284, оп. 223, д. 204, л. 122.*

[12] Նույն տեղում, ֆ. 1263, ց. 2, գ. 4938, թ. 536.

[13] **Лейкина-Свирская В. Р.,** *указ. соч., с. 141.* Համեմատության համար նշենք, որ այդ նույն ժամանակ նույնքան բնակչին Անգլիայում ընկնում էր 63,8, իսկ Բելգիայում՝ 45,1 բժիշկ:

[14] *РГИА СПб., ф. 1263, оп. 2, д. 5013, л. 399.*

[15] Նույն տեղում, գ. 5257, թ. 752.

[16] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 112, ց. 2, գ. 152, մաս 2-րդ, թ. 72:

[17] *Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Распределение населения по видам главных занятий..., т. III, с. 82, 84, 92, 96, 119, 127.*

Շատ ավելի դժվար է որոշել լուսավորության բնագավառում աշխատողների թվաքանակը: Ցարական վիճակագրությունը սովորաբար հայկական դպրոցներում աշխատողների մասին տեղեկություններ չի հաղորդում, նույնիսկ նվազեցվում է թե՛ դպրոցների, թե՛ սովորողների և դասավանդողների թիվը: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր հայկական դպրոց ունեցել է թեկուզ մեկ ուսուցիչ, իսկ իրականում, ինչ խոսք, շատ ավելին էր, ապա նրանց թվաքանակը որոշ տարիների պիտի հասած լիներ 250-300-ի: Ա. Երիցյանը, ելնելով թեմական տեսուչների, մամուլի և Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի տվյալներից, մշակել և «Արձագանքում» հրատարակել է 1882 թ. վերաբերող մի շարք վիճակագրական տեղեկություններ[18], որոնցից կարելի է կարծիք կազմել ոչ միայն հայկական դպրոցների, աշակերտների, այլև ուսուցիչների քանակի մասին: Տեղեկությունները տրված են ըստ թեմերի, ուստի վերցված են այն տվյալները, որոնք մոտավորապես ընդգրկում են Արևելյան Հայաստանը: Ըստ այդ տեղեկությունների, Անդրկովկասի հայկական դպրոցներում 1882 թ. աշխատել է 538 ուսուցիչ, որոնցից 234-ը՝ Արևելյան Հայաստանն ընդգրկող թեմերում: 1894-95 թթ. ուսումնական տարում, ըստ Էջմիածնի Սինոդի մոտավոր տվյալների, Ղարաբաղի և Երևանի թեմերում աշխատել են 202 ուսուցիչ և 53 ուսուցչուհի[19]: Սա միայն հայկական դպրոցներում, այն էլ՝ ոչ լրիվ տվյալներով: Բայց չէ՞ որ Արևելյան Հայաստանում գոյություն ունեին մուսուլմանական և քիչ թվով հունական և հրեական դպրոցներ: Ճիշտ է, նշված դպրոցներում հիմնականում դասավանդել են եկեղեցականները: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ դպրոցները գտնվում էին կաթողիկոսի ենթակայության տակ, և ուսուցիչների թվաքանակը չէր բավարարում:

1897 թ. Երևանի նահանգում լուսավորության բնագավառում աշխատում էին 283 տղամարդ և 41 կին, Կարսի մարզում՝ 146 տղամարդ և 29 կին, Զանգեզուրում, Ղազախում, Շուշիում, Բորչալուում և Ախալքալաքում՝ 211 տղամարդ և 31 կին: Ընդամենը, Արևելյան Հայաստանում Ռուսական կայսրության առաջին մարդահամարի տվյալների համաձայն, 1897 թ. ինքնագործների (ինքնուրույն զբաղմունք ունեցողների) թվաքանակը լուսավորության բնագավառում հասնում էր 741-ի, որից 101-ը՝ կին: Նշվածին հարկ է ավելացնել նաև փակ ուսումնական հաստատություններում զբաղվածներին՝ 38 մարդ: Այսպիսով, ընդամենը՝ 779 մարդ[20]: Բնականաբար, այս տվյալները վերջնական չեն: Կրթության բնագավառում մեծ էր հոգևորականների ներդրումը, սակայն նրանց թվաքանակը հնարավոր չէ պարզել:

Հոգևոր բնագավառում աշխատողների թիվն ամբողջական լինելու համար հարկ է ավելացնել նաև գիտության, արվեստի, գրականության և այլ ոլորտներում աշխատողներին: Ըստ ռուսական առաջին մարդա-

[18] Արձագանք, 1882, թիվ 27: Տե՛ս **Երկանյան Վ.,** Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Ե., 1970, էջ 223:

[19] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314: Տե՛ս **Երկանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 172:

[20] *Первая всеобщая перепись… Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т. III, с. 82, 84, 92, 94, 117, 119, 126-127.*

համարի տվյալների, այդ ասպարեզում աշխատում էր ընդամենը 74 մարդ, որից միայն մեկն էր կին[21]: Մասնավոր իրավաբանական գործունեությամբ զբաղվում էր 61 մարդ[22], որոնց մեծ մասը կենտրոնացված էր նահանգական Երևան քաղաքում: Ընդհանուր առմամբ, Արևելյան Հայաստանում այդ բնագավառներում ինքնագործների թվաքանակը կազմում էր 1437 մարդ:

Մասնավոր իրավաբանական գործունեությամբ, գիտության, արվեստի, գրականության, լուսավորության և առողջապահության բնագավառներում ինքնագործների տեղաբաշխումը և թվաքանակը, ըստ վարչական շրջանների, ներկայացված է աղյուսակ թիվ 1-ում:

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման ժամանակ հոգևորականությունը ևս հաշվարկվում է մտավորականության կազմում:

Արևելյան Հայաստանի շրջաններից Երևանի նահանգում, 1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով, եղել է ընդամենը 7607-ը՝ հոգևոր դասի պատկանող (ընտանիքի անդամների հետ միասին), որից արական սեռի՝ 4172, իգական՝ 3435 մարդ[23]:

Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմել հայ լուսավորչականները՝ 6741 մարդ (3677 տղամարդ և 3064 կին) [24]:

Հայ կաթոլիկները կազմել են չնչին փոքրամասնություն՝ 56 տղամարդ և 41 կին, ընդամենը՝ 97 մարդ: Փոքրաթիվ էր նաև ուղղափառ հոգևոր դասը. ընդամենը՝ 59 մարդ (38 տղամարդ և 21 կին), մահմեդական շիա և սունի դավանողները՝ 88-ը:

Հայ լուսավորչականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,02%-ը, հայ կաթոլիկ և ուղղափառ հոգևոր դասը՝ 0,01%-ը: Մի փոքր ավելի էր մահմեդական հոգևոր դասի տեսակարար կշիռը, որ հավասար էր 0,1%-ի: Ընդհանուր առմամբ, բոլոր դավանանքների հոգևոր դասերը կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,13%-ը:

Երևանի նահանգի հոգևոր դասի 26,17%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի, 21,38%-ը՝ Էջմիածնի գավառներում: Երևանի գավառում բնակվում էր 18,65%-ը: Բազմամարդ էր նաև Նախիջևանի գավառի հոգևոր դասը՝ 12,20%: Նահանգի մնացած՝ Նոր Բայազետի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասի ներկայացուցիչների քանակը համեմատաբար փոքրաթիվ էր: Նրանց բաժին էին ընկնում համապատասխանաբար 8,54, 7,05 և 6,01%-ը:

---

[21] *Первая всеобщая перепись Российской империи 1897 г. Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и некоторым занятиям, СПб., 1905, с. 42.*

[22] *Первая всеобщая перепись… Распределение населения по видам главных занятий..., с. 82, 94, 119, 127.*

[23] *Свод статистических данных о населении Закавказского края, извлечения из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.*

[24] 1886 թ. ընտանեկան ցուցակագրության ժամանակ հայ հոգևոր դասին պատկանող կանանց թիվը նշված է 3164, որը սխալ է: Տե՛ս նշված աղբյուրի *"Свод населения по городам и уездам Эриванской губернии"* բաժինը:

Հոգևոր դասը զգալի թիվ էր կազմում Արևելյան Հայաստանի այլ շրջաններում ևս: Շուշիի գավառում նրանց թվաքանակը հասնում էր 2461-ի, որից իգական սեռին պատկանում էր 1024-ը: Բավական փոքրաթիվ էր մահմեդական հոգևոր դասը՝ ընդամենը 390 մարդ: Մնացած 2071-ը հայ լուսավորչականներն էին, որոնք կազմում էին Շուշիի գավառի բնակչության 1,64%-ը, իսկ մահմեդական շիա դավանանքին պատկանող հոգևոր դասը՝ 0,31%, ընդամենը՝ 1,95%:

Բորչալուի գավառի հոգևոր դասի ընդհանուր քանակը հավասար էր 1065-ի, որից արական սեռի՝ 576, իգական՝ 489 մարդ: Այս գավառի հո-

Աղյուսակ 1[25]

Վարչական միավորներ	*Մասնավոր իրավաբաններ*		*Կրթություն*		*Գիտություն, գրակ.,արվեստ*		*Առողջապահություն*	
	ար.	*իգ.*	*ար.*	*իգ.*	*ար.*	*իգ.*	*ար.*	*իգ.*
Երևանի գավառ	27	-	122	27	4	-	55	13
Ալեքսանդրապոլի	6	3	47	10	25	-	45	9
Նախիջևանի	2	-	41	2	1	-	23	13
Նոր Բայազետի	-	-	15	1	-	-	11	3
Սուրմալուի	-	-	9	-	-	-	22	2
Շ.Դարալագյազի	1	-	8	-	-	-	4	-
Էջմիածնի	1	-	41	1	-	-	15	2
Ընդամենը Երևանի նահանգում	37	3	283	41	30	-	175	42
Կարսի օկրուգում	8	-	71	22	18	1	89	10
Արդահանի	-	-	18	3	2	-	10	-
Կաղզվանի	-	-	47	3	2	-	21	1
Օլթիի	-	-	10	1	1	-	14	-
Ընդամենը Կարսի մարզում	8	-	146	29	23	-	134	11
Ախալքալաքի	1	-	34	6	-	-	22	2
Բորչալուի	3	-	33	10	14	-	30	12
Զանգեզուրի գավառ	-	-	21	-	-	-	10	3
Ղազախի	2	-	27	4	2	-	16	4
Շուշիի	7	-	96	11	7	-	49	43
Ընդամենը Արևելյան Հայաստանում	58	3	640	101	73	1	436	87
	61		741+*38**		74		523	

* - փակ ուսումնական հաստատություններում աշխատողների թվաքանակը:

գևոր դասի կազմը, ըստ դավանանքի, ավելի բազմազան էր: Գերակշռում էր հայ հոգևոր դասը՝ 570 մարդ (47-ը՝ հայ կաթոլիկ): Երկրորդ տեղը՝

[25] Աղյուսակը կազմված է 1897 թ. մարդահամարի՝ արդեն նշված նյութերի հիման վրա:

377 մարդ, գրավում էին ուղղափառները: Մահմեդական հոգևորականությունը փոքրաթիվ էր:

Հայ լուսավորչական հոգևոր դասը կազմում էր Բորչալուի գավառի բնակչության 0,52%-ը, հայ կաթոլիկները՝ 0,05%-ը, ուղղափառները՝ 0,38%-ը: Սուննիները և շիաները կազմում էին գավառի բնակչության 0,1 %-ից քիչ ավելին: Ընդհանուր առմամբ, հոգևոր դասերը կազմում էին Բորչալուի բնակչության 1,05%-ը:

Զանգեզուրի գավառի հոգևոր դասի ընդհանուր քանակը հավասար էր 1831-ի, որից 836-ը՝ իգական սեռի: Մեծ մասը՝ 1583 մարդ, կազմում էին հայ լուսավորչականները, մնացած 248-ը պատկանում էին մահմեդական շիա և սուննի դավանանքներին: Հայ հոգևորականությունը կազմում էր գավառի բնակչության 1,28%-ը, սուննիները՝ 0,05%-ը, իսկ շիաները՝ 0,15%-ը, ընդամենը՝ 1,48%:

Ղազախի գավառում, նորից ըստ 1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների, կար հոգևոր դասին պատկանող 935 մարդ (517-ը՝ արական, 418-ը՝ իգական սեռի), որից 459-ը հայ լուսավորչականներն էին և կազմում էին բնակչության 0,59%-ը: Շիա հոգևորականները կազմում էին բնակչության 0,24%-ը, սուննիները՝ 0,32%, իսկ ամբողջ դասը՝ 1,1%:

Ախալքալաքի գավառում հոգևոր դասի ընդհանուր քանակը հավասար էր 1168 մարդու, որը կազմում էր բնակչության 1,83%-ը: Նշված թվաքանակից ճնշող մեծամասնությունը՝ 871 մարդ, եղել է հայ լուսավոր–չական[26]:

Արևելյան Հայաստանի շրջաններից Կարսի մարզի հոգևորականության քանակի վերաբերյալ 80-ական թթ. տվյալներ չկան: Պետք է ենթադրել, որ մարզի հոգևոր դասն էլ բնակչության նկատմամբ ունեցել է այն տոկոսային հարաբերությունը, ինչ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այսինքն՝ տատանվել է 1,1-ից (Բորչալուի գավառում) մինչև 1,95%-ի սահմաններում (Շուշիի գավառում):

Ամփոփելով վերոհիշյալ տվյալները՝ նկատում ենք, որ հոգևոր դասի ընդհանուր քանակը Արևելյան Հայաստանում XIX դ. 80-ական թթ. (առանց Կարսի մարզի) հավասար է 15.067 մարդու, որից 12.348-ը՝ հայ լուսավորչական: Հոգևոր դասը կազմում էր բնակչության 1,35%-ը:

Ամբողջ Անդրկովկասում, Սևծովյան օկրուգում և Դաղստանի մարզում հայ հոգևոր դասի քանակը հասնում էր 17.700-ի (կաթոլիկներ՝ ընդամենը 466-ը)՝ ուղղափառներից հետո բացարձակ քանակով գրավելով երկրորդ տեղը:

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս քննարկելու հոգևոր դասի քանակական փոփոխությունները նաև XIX դ. 90-ական թթ. վերջին: Երևանի նահանգում 1897 թվականին եղել է քրիստոնյա հոգևոր դասին պատկանող 6531 մարդ, որից 1078-ը բնակվել են քաղաքներում[27]: Նշված քանակից 3.422-ը եղել են արական

[26] *Свод статистических данных о населении Закавказского края, извлечения из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.*

[27] *Первая всеобщая перепись..., LXXI, Эриванская губерния, СПб., 1905, с. 2.*

սեռի, 3.109-ը՝ իգական[28]: Ինչպես 80-ական, այնպես էլ 90-ական թթ. հոգևոր դասը բազմաքանակ էր Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառներում, որոնցում բնակվում էր ընդհանուրի 24,07 և 22,63%-ը, Երևանի գավառում՝ 18,50%-ը: Նոր Բայազետի գավառին բաժին էր ընկնում ընդհանուրի 12,04, իսկ Նախիջև-վանին՝ 10,98%-ը: Համեմատաբար սակավաթիվ էր Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասը (6,92 և 4,87%)[29]:

Եղած վիճակագրական տվյալները հնարավորություն չեն տալիս պարզելու մահմեդական և այլ հոգևոր դասերի քանակը՝ ըստ գավառների, սակայն նահանգում նրանց թվաքանակը կազմել է 1032 մարդ[30]:

Այսպիսով, Երևանի նահանգի հոգևոր դասի ընդհանուր քանակը կազմում էր 7563[31] մարդ կամ բնակչության 0,91%-ը: Դարի 80-ական թթ. հետ համեմատած՝ հոգևոր դասը ոչ միայն չի աճել, այլև նվազել է բացարձակ քանակով (44 մարդ), հետևաբար նաև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ (0,22%):

Կարսի մարզի քրիստոնյա հոգևոր դասը կազմել է 1332 մարդ, որից 733-ը պատկանում էին արական սեռին, իգականին՝ 599[32]: Նշված քանակից 235-ը (17,64%) բնակվում էր մարզի քաղաքներում, 1097-ը՝ (82,36%) օկրուգներում: Քրիստոնյա հոգևոր դասի կեսից ավելին՝ 722-ը (54,20%), բնակվում էր Կարսի, իսկ 462-ը՝ (34,69%) Կաղզվանի օկրուգներում: Հոգևոր դասի աննշան տոկոսը (6,61% և 4,50%) բաժին էր ընկնում Արդահանի, Օլթիի օկրուգներին: Նշենք նաև, որ եթե Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում հայ լուսավորչականները կազմում էին քրիստոնյա և ընդհանուր հոգևոր դասի բացարձակ մեծամասնությունը, ապա Կարսի մարզում ընդհանուր քանակի կեսից էլ պակաս՝ 619 մարդ[33]: Բավական մեծ թիվ էր կազմում նաև մահմեդական հոգևոր դասը՝ 206 մարդ, 44-ն էլ այլ դավանանքների ներկայացուցիչներ էին: Այսպիսով, մարզի հոգևոր դասի ընդհանուր քանակը կազմում էր 1582 մարդ կամ բնակչության 0,54%-ը [34]:

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում ամենամարդաշատն էր Շուշիի գավառի քրիստոնյա հոգևոր դասը՝ 1184 մարդ (արական՝ 621,

---

[28] Նույն տեղում, էջ 30:

[29] Հաշվարկները կատարված են վերոհիշյալ աղբյուրների հիման վրա:

[30] *Первая всеобщая перепись... Распределение населения по главнейшим сословиям…, СПб., 1905, с. 27. Первая всеобщая перепись..., LXXI, Эриванская губерния, с. 104.*

[31] Ըստ Վ. Ե. Խոջաբեկյանի՝ 4646 մարդ, որը չի համապատասխանում իրականությանը: Տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 161:

[32] *Первая всеобщая перепись..., 1897 г., LXIV, тетрадь I, Карсская область, СПб., 1900, с. 32.*

[33] *Первая всеобщая перепись... Распределение населения по главнейшим сословиям..., СПб., 1905, с. 27.*

[34] *Первая всеобщая перепись... Процентное распределение наличного населения империи обоего пола по группам занятий...,* նշված է 0,52% (տե՛ս էջ 17), որը ճիշտ չէ:

իգական՝ 563), որից 270-ը բնակվում էր Շուշի քաղաքում[35]: Հոգևոր դա–սը Շուշի գավառում, 80-ական թթ. հետ համեմատած, կրճատվել է մոտ կիսով չափ:

Շատ ավելի նվազել է Զանգեզուրի և Ղազախի գավառների հոգևոր դասի քանակը՝ կազմելով ընդամենը 859 և 325 մարդ[36]:

Նույն պատկերն է նկատվում նաև Բորչալուի գավառում, որտեղ քրիստոնյա հոգևոր դասի թիվը հասնում էր 838 մարդու[37]: Էական փոփոխություն չի կրել Ախալքալաքի գավառի հոգևոր դասի թվաքանակը՝ ընդամենը 1292 մարդ: Ճիշտ է, մահմեդական և այլ հոգևոր դասերի քանակը այս շրջաններում հաշվառված չէ, բայց նրանք փոքրաթիվ էին և էական փոփոխություններ չէին առաջացնի:

Աղյուսակ 2

Վարչական միավորները	1886 թ.			1897 թ.		
	բնակչ.	*հոգևոր դաս*	*%*	*բնակչ.*	*հոգևոր դաս*	*%*
Երևանի գավառ	113.614	1.419	1,25	150.879	1.208*	0,80
Ալեքսանդրապոլի	135.731	1.991	1,47	165.503	1.572	0,95
Նոր Բայազետի	103.611	650	1,62	122.573	786	0,64
Էջմիածնի	100.591	1.626	1,62	124.237	1.478	1,19
Նախիջևանի	84.020	928	1,10	100.771	717	0,71
Սուրմալուի	71.066	636	1,75	89.055	452	0,51
Շ.Դարալագյազի	61.772	457	1,74	76.538	318	0,42
Ընդ. Երևանի նահանգում	***670.405***	***7.607***	***1,13***	***829.556***	***6.531 / 1.032** / 7.563***	***0,91***
Կարսի օկրուգում	76.917	-	-	134.142	722*	0,54
Արդահանի	43.643	-	-	65.767	88	0,13
Կաղզվանի	34.158	-	-	59.230	462	0,78
Օլթիի	19.326	-	-	31.519	60	0,19
Ընդ. Կարսի մարզում	***174.044***	-	-	***290.654***	***1.332 / 250** / 1.582***	***0,54***
Զանգեզուրի գավառ	123.997	1.831	1,48	137.871	859	0,62
Ղազախի	85.050	935	1,10	112.074	325	0,29
Շուշիի	126.263	2.461	1,95	139.771	1.184	0,85
Ախալքալաքի	63.799	1.168	1.83	72.313	1.292	1.79
Բորչալուի	101.847	1.065	1,05	128.587	838	0,65
Ընդ.Արևել. Հայաստանում	***1.345.405***	***15.067***	***1,35***	***1.710.826***	***13.643***	***0,8***

* - նահանգի գավառներում և մարզի օկրուգներում՝ առանց մահմեդական հոգևոր դասի:
** - ավելացված է ոչ քրիստոնյա հոգևոր դասին պատկանողների քանակը:

XIX դ. 80-90-ական թթ. հոգևոր դասը Արևելյան Հայաստանում ոչ միայն քանակապես չի աճել, այլև նվազել է այն դեպքում, երբ երկրի բնակչության աճը կազմել է մոտ 47,98%:

---

[35] *Первая всеобщая перепись..., LXIII, Елисаветпольская губерния, СПб., 1904, с. 32.*
[36] Նույն տեղում:
[37] Նույն տեղում, *LXIX, Тифлисская губерния, СПб., 1905, с. 35.*

Ընդհանուր առմամբ, հոգևոր դասի թվաքանակը Արևելյան Հայաստանում կազմում էր 13.643 մարդ (առանց Զանգեզուրի, Ղազախի, Շուշիի և Բորչալուի գավառների մահմեդական հոգևոր դասի) կամ բնակչության 0,8%-ը՝ ի տարբերություն մեկ տասնամյակ առաջվա 1,35%-ի: Արևելյան Հայաստանի հոգևոր դասի քանակը, տեղաբաշխումը և տոկոսային հարաբերությունը տվյալ շրջանի բնակչության նկատմամբ տրված են աղյուսակ թիվ 2-ում [38]:

Արևելյան Հայաստանում հոգևոր դասի ընդհանուր քանակից ինքնուրույն զբաղմունք ունեին (ինքնագործներ էին) 2445-ը: Հոգևորականների կեսից քիչ պակասը՝ մոտ 46%-ը, բաժին էր ընկնում Երևանի նահանգին, 19,8%-ը՝ Կարսի մարզին, 12,11%-ը՝ Շուշիի գավառին, իսկ մնացած 22,09%-ը՝ Զանգեզուրի, Ղազախի, Ախալքալաքի և Բորչալուի գավառներին: Հոգևորականները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության (առանց զորքի՝ 1.670.280 մարդ) 0,15%-ը, իսկ ինքնագործների՝ ինքնուրույն զբաղմունք ունեցող բնակչության (300.973 մարդ)՝ 0,8%-ը: Հոգևորականների քանակը, տեղաբաշխումը, ըստ դավանանքի, կազմված ինքնուրույն զբաղմունք ունեցող բնակչության (300.973 մարդ)՝ 0,8%-ը:

Աղյուսակ 3

Վարչական միավորները	*Հայ Գրիգորյաններ*	*Ուղղափառ. հոգևորակ.*	*Այլ դավա-նանքի հոգ.*	*Այլ հոգևոր սպասավ.*	*Ընդ.*
Երևանի գավառ	134	20	71	18	243
Ալեքսանդրապոլի	203	11	10	18	242
Նոր Բայազետի	136	3	15	15	169
Էջմիածնի	164	7	41	7	218
Նախիջևանի	63	2	53	16	134
Սուրմալուի	28	5	20	1	54
Շ.Դարալագյազի	30	2	27	3	62
Ընդամենը Երևանի նահանգում	758	50	237	78	1123
Կարսի օկրուգում	62	57	88	5	212
Արդահանի	4	24	102	3	133
Կաղզվանի	31	32	25	-	88
Օլթիի	6	10	34	-	50
Ընդամենը Կարսի մարզում	103	123	249	8	483
Զանգեզուրի գավառ	104	3	56	1	164
Ղազախի	44	2	59	7	113
Շուշիի	161	18	96	21	296
Ախալքալաքի	50	13	17	8	88
Բորչալուի	62	65	46	6	178
Ընդամենը Արևելյան Հայաստանում	1282	274	760	129	2445

[38] Հաշվարկները կատարված են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. *Свод статистических данных о населении Закавказского края..., 1886 г., Первая всеобщая перепись..., LXXI, Эриванская губерния, СПб., 1905, с. 2, 30; т. LXIV, Карсская область, тетрадь I, СПб., 1900, с. 1, 32. Елисаветпольская губерния, т. LXIII, СПб., 1904, с. 32. Тифлисская губерния, т. LXIX, СПб., 1905, с. 35.*

Հոգևորականների քանակը, տեղաբաշխումը, ըստ դավանանքի, կազմված 1897թ. Ռուսական կայսրության առաջին մարդահամարի տվյալների հիման վրա, ներկայացված է թիվ 3 աղյուսակում[39]:

Ինչպես նախորդ, այնպես էլ հետագա հաշվարկները կատարվել են առանց զորքի քանակի, որն Արևելյան Հայաստանի բնակչության օրգանական մասը չէր կազմում: Արևելյան Հայաստանում, որպես սահմանամերձ շրջան, ռուսական կառավարությունը կենտրոնացրել էր մեծ թվով զորք՝ 40.546 մարդ, որը կազմում էր ամբողջ բնակչության 2,37%-ը, իսկ ինքնագործ բնակչության՝ 11,87%-ը: Կարսի մարզում զորքը կազմում էր արդեն բնակչության 6,4% -ը, իսկ ինքնագործների՝ 27,24%-ը: Պարզ է, որ զորքի այս քանակի պայմաններում, առանց այն օտարելու հաշվարկներ կատարելիս, չենք կարող ստանալ Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի օբյեկտիվ պատկերը:

Ի տարբերություն կայսրության մյուս շրջանների, Արևելյան Հայաստանում, հատկապես Կարսի մարզում և Երևանի նահանգում, մեծ չէր նաև վարչական մարմիններում ծառայողների թվակազմը: Երևանի նահանգում, ըստ Վ. Ե. Խոջաբեկյանի հաշվարկների, «չինովնիկների» թվաքանակը հասնում էր 1697 մարդու, Կարսի մարզում՝ 550-ի [40], Ախալքալաքի, Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում՝ 1014, ընդամենը՝ 3261 մարդ[41]: Ծառայողները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության մոտ 0,2%-ը, իսկ ինքնագործների՝ մոտ 1,1%-ը:

Անարտադրողական բնակչության պատկերն ամբողջական լինելու հա-մար պետք է ավելացնել նաև ռանտյեներին և թոշակառուներին, որոնց թվաքանակը, առանց ընտանիքի անդամների, Երևանի նահանգում կազմում էր 2896, իսկ Կարսի մարզում՝ 744 մարդ, այլ անարտադրողական բնակչությունը՝ համապատասխանաբար 3034 և 874 մարդ[42]: Ընդհանուր առմամբ, 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն, «Անար-տադրողական բնակչությունը զորքի հետ կազմում էր Երևանի նահանգի ինքնագործ բնակչության 13,4 և Կարսի մարզի՝ 31,6%-ը: Ամբողջ անարտադրողական բնակչության հիմնական մասը, Կարսի մարզում ինքնագործների՝ 88,7, իսկ Երևանի նահանգում՝ 63,5%-ը, իրենից ներկայացնում էր պետական, ռազմական ապարատը՝ չինովնիկու-թյունը և զորքը: Հոգևորականներն ազատ զբաղմունք ունեցող բնակչության հետ կազմում էին Երևանի նահանգի ինքնագործ բնակչության 8,23 և Կարսի մարզի 3,86%-ը, ռանտյեները, թոշակառուները՝ նշված վարչական միավորների ինքնագործների 8,5 %-ը[43]: Ինչպես երևում է վերոնշյալ թվական տվյալներից, Արևելյան Հայաստանն աչքի էր ընկնում անարտադրողական բնակչության բավական մեծ թվով, սակայն մտավորականու-

---

[39] *Первая всеобщая перепись… Распределение населения по видам главных занятий..., т. III, СПб., 1905, с. 82-84, 94-95, 118-119, 126-127.*

[40] **Խոջաբեկյան Վ. Ե.,** Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե, 1979, էջ 389:

[41] *Первая всеобщая перепись… Распределение населения по видам главных занятий..., т. III, с. 82, 94, 95, 119, 127.*

[42] **Խոջաբեկյան Վ. Ե.,** նշվ. աշխ., էջ 161 (աղյուսակ N 37):

[43] Նույն տեղում:

թյունը քիչ էր՝ չնայած գնալով աճում էր նրա թվաքանակը և մեծանում տեսակարար կշիռը։

Այսպիսով, ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն՝ մտավորականությունը ծառայողների հետ (6.875 մարդ) կազմում էր Արևելյան Հայաստանի բնակչության 0,41%-ը, իսկ ինքնագործների՝ 2,28%-ը։ Նշենք, որ Ռուսական կայսրությունում, նույն տվյալների հիման վրա, Լ. Կ. Երմանի կատարած հաշվարկների համաձայն, նրանք կազմում էին ինքնագործ բնակչության 2,7% –ը՝ 870 հազար մարդ [44]:

Ինչպես ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանի մտավորականությունն իր սոցիալական կազմով միատարր չէր, համալրվում էր տարբեր դասակարգերից, որի հետևանքով էլ հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները համապատասխան վերափոխումներ էին առաջացնում մտավորականության կազմում։ Որքան հասարակությունը շերտավորվում էր, խորանում էր տարբեր դասակարգերի միջև հակադրությունը, այնքան շերտավորվում էր նրա միջանկյալ դաս կազմող մտավորականությունը, ձևավորվում էին վերջինիս տարբեր հոսանքները։

СОСТАВ И ЧИСЛЕННОСТЬ ИНТЕЛЛИГЕНЦИИ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 80-90-Х ГГ. XIX ВЕКА

КИРАКОСЯН Г. Л.

Резюме

В связи с развитием промышленности и сельского хозяйства Восточная Армения нуждалась в подготовке высококвалифицированных специалистов. Начался процесс формирования национальной интеллигенции. По данным переписи населения Российской империи 1897 года, в Эриванской губернии, Карсской области, а также в уездах Ахалкалака, Борчалу, Зангезура, Казаха и Шуши в области образования число самостоятельных деятелей достигло 749 человек (из них 101 чел. – женщины), в сфере здравоохранения – 523 человека (из них 87 чел. – женщины). В области науки, литературы и искусства работали 74 человека, а частной юридической деятельностью занимались всего 61 человек. При рассмотрении социальной структуры населения духовенство также включали в состав интеллигенции, и на данный период оно насчитывало 2445 чел.

В конце XIX в. интеллигенция (6875 человек) составляла 0.41% населения Восточной Армении (без учета войска – 1.676.280 человек), а самостоятельные деятели (300.973 чел.) – 2.28%.

[44] **Ерман Л. К.,** *указ. соч., с. 11-15.*